ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Նարեկ Արմենի Սուքիասյանի ԻԳ.00.02. - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումների էվոլյուցիան ՀՀ արտաքին քաղաքականության մեջ (հայ-ռուսական հարաբերությունների օրինակով, 2008-2020թթ.)» վերտառությամբ հոդվածի մասին

Պաշտպանության ներկայացվող ատենախոսության թեման խիստ արդիական է և կարևոր: Թեմայի կարևորության մասին առաջին հերթին վկայում է այն փաստը, որ բազմաթիվ արտաքին քաղաքական մարտահրավերների առջև կանգնած Հայաստանի Հանրապետությունում առաջին հերթին կարիք կա ռեալ մեխանիզմներով գնահատել, արժեվորել դրանք, իսկ հետո նաև՝ փնտրել դրանց հետ աշխատելու ու դրանք չեզոքացնելու մեխանիզմները: Այս տեսանկյունից կարևորում ենք հատկապես արտաքին քաղաքական ռազմավարական ուղղություններով աշխատանքը: Հեղինակի ուսումնասիրությունը հենց այդպիսի համապարփակ աշխատանք է, որը տեսական բազայի վրա է դնում ՀՀ արտաքին քաղաքականության դինամիկայի, դրանում տեղ գտած հիմնական արտաքին ու ներքին փոփոխականների էվոլյուցիան:

Աշխատության ներածական մասում հեղինակը սահմանել է հստակ նպատակ ու խնդիրներ, իսկ ուսումնասիրության մեջ անդրադարձել է յուրաքանչյուրին՝ տալով սահմանած հարցադրումների պատասխանները: Ուսումնասիրության ընթացքում հեղինակն օգտագործել է մեթոդաբանական հարուստ գործիքակազմ, ինչը հնարավորություն է տվել կատարել համապարփակ ուսումնասիրություն՝ հետազոտական հարցերին նայելով տարբեր տեսանկյուններից: Ուսումնասիրության արդյունքներն ամբողջությամբ արտացոլված են եզրակացություններում: Դրանք շատ հստակ են, համակարգված և բխում են ուսումնասիրության արդյունքներից: Հեղինակն իրավացիորեն կարծում է, որ իր ուսումնասիրության արդյունքները կարող են ունենալ գործնական նշանակություն: Դրանք կարող են օգտագործվել արտաքին քաղաքական որոշումներ կայացնող ՀՀ մարմինների կողմից:

Ներկայացված աշխատության ուժեղ կողմերից մյուսը օգագործված ահռելի աղբյուրագիտական բազան է: Հեղինակն օգտվել է աղբյուրների այնպիսի բազայից, որը հնարավորություն է տվել տեսական հիմքերի վրա դնել Հայաստանի արտաքին քաղաքականության զարգացման դինամիկայի էությունը՝ դրա վրա ազդող փոփոխականները մեկնաբանելով քաղաքական տեսությունների պրիզմայով: Բացի այն մեթոդներից, որոնք հեղինակը նշել է ներածության մեջ, լայնորեն կիրառվել են նաև իրադարձային և բովանդակային վերլուծության մեթոդները: Այսպիսով, ընտրված տեսամեթոդաբանական բազան արդարացվել է արդյունավետ հետազոտություն իրականացնելու տեսանկյունից:

Աշխատությունն աչքի է ընկնում նաև իր համակարգվածությամբ: Այն ունի հստակ կառուցվածք, տեխնիկական ու գիտական ձևավորված ապարատ: Աշխատության յուրաքանչյուր ենթագլխի սկզբնամասում հեղինակը սահմանում է իր հետազոտական հարցը/հարցերը, իսկ վերջնամասում՝ տալիս դրանց պատասխանները:

Աշխատությունը քննադատական մոտեցմամբ դիտարկելիս, առանձնացրել ենք հետևյալ հիմնական նկատառումները.

1. Ինչպես արդեն վերը նշել ենք, հեղինակն օգտագործել է աղբյուրագիտական հարուստ բազա: Այդ բազան ավելի ամբողջական, իսկ ուսումնասիրության փաստական հենքն ավելի ամբողջական կդառնար, եթե հեղինակն օգտվեր նաև ՀՀ նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանի (Ընտրանի) և Ռոբերտ Քոչարյանի (Կյանք և ազատություն), ինչպես նաև ՀՀ ազն Վարդան Օսկանյանի (Անկախության ճանապարհով) աշխատություններից: Իհարկե, հեղինակը որպես ուսումնասիրության շրջանակներ սահմանում է 2008-2020 թվականները, սակայն աշխատության մեջ անդրադարձել է նաև մինչև 2008 թվականը տեղ գտած իրադարձությունների:
2. Ինչպես վերը փաստել ենք, հեղինակն օգտագործել է մեթոդաբանական հարուստ բազա, այդ թվում՝ ՍՎՈՏ վերլուծության որոշակի տարրեր: Սակայն ներկայացվել են, հատկապես՝ ՀՀ-ՌԴ հարաբերությունների մեկնաբանման ընթացքում, հիմնականում դրանցում տեղ գտած թույլ կողմերն ու մարտահրավերները: Կարծում ենք, որ կարելի էր ավելի մեծ շեշտադրում կատարել դրանցում հնարավորությունների վեր հանման վրա:

Մասնավորապես՝ ինչ հնարավորություններ է տեսնում հեղինակը հայ-ռուսական հարաբերությունների բարելավման, ՌԴ-Ադրբեջան դինամիկ զարգացող հարաբերություններին (կամ Ադրբեջանի՝ տարածաշրջանում դերի բարձրացում և ՌԴ հնարավորությունների նվազում) բալանսավորելու/հակակշռելու տեսանկյունից:

3. Հեղինակը հիմնավոր ձևով փաստում է, որ 2008-ը բեկումնային տարի էր տարածաշրջանային զարգացումների համատեքստում, իսկ Հնգօրյա պատերազմն այն ինդիկատորն էր, որը չափելի դարձրեց տարածաշրջանում անկայունության պայմաններում Հայաստանի արտաքին ու ներքին խնդիրներն ու հնարավոր մարտահրավերները: Հեղինակը բավականին մեծ ծավալով խոսել է 2008-ի օգոստոսի էսկալացիայի պատճառների ու դրա ընթացքի մասին: Կարծում ենք, որ այս համատեքստում կարելի էր մի փոքր անդրադառնալ նաև Վրաստանի հայ համայնքի գործոնին: Փաստենք, որ մինչ այդ Վրաստանի էլիտաների կողմից Հայաստանն ու Վրաստանի հայ համայնքը Ռուսաստանի հետ հնարավոր պատերազմի պարագայում դիտարկվում էին որպես պոտենցիալ սպառնալիք: Հնգօրյա պատերազմը ամբողջությամբ փոխեց այս ընկալումը վրաստանյան ներքաղաքական շրջանակներում:

4. Շարունակելով Հնգօրյա պատերազմի թեման. կարծում ենք, որ անհրաժեշտ էր խոսել նաև դրա գլխավոր պատճառներից մեկի՝ Վրաստանից ռուսական ռազմաբազաների դուրսբերման մասին: Երկարաժամկետ պրիզմայով դիտարկելիս, այն ոչ միայն փոխեց տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը, այն ձևավորող գործիքակազմը, այլ նաև ազդեց հայ-ռուսական հարաբերությունների վրա: Հայաստանի տարածքը մնաց ՌԴ միակ ռազմական հենակետը Հարավային Կովկասում, ինչը Մոսկվային ավելի զգայուն և ջղաձիգ դարձրեց Հայաստանի կոմպլեմենտար արտաքին քաղաքականության նկատմամբ:

5. Հեղինակն անդրադարձել է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական բոլոր ռազմավարական ուղղություններին, դրանցում տեղ գտած փոխակերպումներին: Սակայն կարծում ենք, որ հեղինակը մի փոքր անտեսել է Իրանի Իսլամական Հանրապետության և Չինաստանի գործոնը:

Շրջափակման, իսկ ռուս-վրացական հարաբերություններում եռակողմ փակուղու պայմաններում Իրանը Հայաստանի համար ձեռք է բերում ռազմավարական նշանակություն: ՀՀ-Իրան, ինչպես նաև ԻԻՀ տարածքով դեպի երրորդ երկրներ և հակառակ ուղղությամբ առևտրաշրջանառությունը հատկապես վերջին տարիներին դրական դինամիկ զարգացող գործընթաց է: Իրանը զսպող-հակակշռող գործառույթ է իրականացնում նաև տարածաշրջանում թուրք-ադրբեջանական դաշինքին ու դրա աճող ազդեցությանը: Չինաստանի աճող հետաքրքրությունը տարածաշրջանում ևս ուսումնասիրման առարկա է: Վերջինս նույնպես անհանդուրժող է թյուրքական էքսպանսիոնիստական ձգտումների նկատմամբ: Կարծում ենք, որ այս երկու ողղությունները կարող են լրացնել այն թույլ կողմերը, որոնք առաջացել են տարածաշրջանում մի կողմից Ադրբեջան-Թուրքիա դաշինքի ուժեղացման, իսկ մյուս կողմից՝ ՌԴ դիրքերի թուլացման պայմաններում:

Ամփոփելով վերոշարադրյալը, գալիս ենք հետևյալ հիմնական եզրակացությանը. նշված դիտարկումները հիմնականում արվում են առաջարկի տեսքով և միտում ունեն հեղինակի կատարած ուսումնասիրությունն առավել ամբողջական ու բազմակողմանի դարձնելու: Դրանք ոչ մի կերպ չեն նսեմացնում այն լայնածավալ ու կիրառական տեսանկյունից կարևոր աշխատանքը, որը կատարվել է: Հեղինակն ամբողջությամբ կատարել է իր առջև ի սկզբանե դրված նպատակն ու խնդիրները:

Հաշվի առնելով վերոնշված փաստերը, կարծում ենք, որ ներկայացվող աշխատանքը լիովին համապատասխանում է գիտական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանին:

ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության
ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Ռոման Կարապետյան

պ.գ.թ., դոցենտ Ռոման Կարապետյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան